Կոդ ----------
Միավոր----------

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2025-2026 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. Ո՞ր թվականին է ձևավորվել Անդրկովկասի Սեյմը:
1) 1917թ. 2) 1918 թ. 3) 1929 թ. 4) 1922 թ.

2. Ո՞վ էր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի կողմից ձևավորված Արարատյան գնդի ղեկավարը:
1) Անդրանիկը 2) Դրոն 3) Վարդանը 4) Հ. Արղությանը

3. Հայոց ցեղասպանության ընթացքում ո՞ր բնակավայրի հայկական գյուղերի բնակչության մեծ մասը բարձրացավ Մուսա լեռ՝ դիմելով ինքնապաշտպանություն:
1) Վանի 2) Սուետիայի 3) Ուրֆայի 4) Շապին-Գարահիսարի

4. Ո՞րքան էր Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը 1920 թ. կեսին:
1) 2 մլն 2) 2,8 մլն 3) 3 մլն 4) 3,5 մլն

5. Մանրանկարչության և որմնանկարչության մեջ տեսարաններ և հորինվածքներ, որոնք հիմնված են Նոր կտակարանային պատմության վրա և լուսաբանում են Քրիստոսի երկրային կյանքի կարևոր դրվագները կոչվում են.
1) Լուսանցազարդ 2) Կենդանագիր 3) Որմնանկար 4) Տերունական պատկեր

6. Ե՞րբ է Խորհրդային Հայաստանում առաջին անգամ պետականորեն նշվել Հայոց ցեղասպանության տարելիցը:
1) 1925 թ. 2) 1935 թ. 3) 1965թ. 4) 1975 թ.

7. Ո՞ր արքայի օրոք է Հայոց կաթողիկոսությունը դարձել անկախ Կեսարիայից.
1) Տրդատ III 2) Խոսրով III 3) Արշակ II 4) Պապ

8. Ո՞ր թվականին է կնքվել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը:
1) 1911թ. 2) 1912 թ. 3) 1913թ. 4) 1914 թ.

9. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Մառնի ճակատամարտը:
1) 1914թ. 2) 1915 թ. 3) 1916թ. 4) 1917թ.

10. Ո՞վ է «Շահնամե» դյուցազներգության հեղինակը:
1) Ռուդաքին 2) Ֆիրդուսին 3) Օմար Խայամը 4) Իբն Սինան

11. Ո՞րտեղ էր գտնվում Ազգերի լիգայի կենտրոնակայանը:
1) Փարիզում 2) Ժնևում 3) Լոնդոնում 4) Վաշինգտոնում

12. Ճորտատիրական իրավունքը վերացնելու համար ռուսաց ո՞ր կայսրն է ստացել *Ազատարար* մականունը:
1) Պյոտր I 2) Ալեքսանդր I 3) Ալեքսանդր II 4) Նիկոլայ II

✂ - - -

Կարճ պատասխանով առաջադրանքներ

13. Ընտրե՛ք այն պնդումները, որոնք ճիշտ են *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Երիտթուրքերը 1889 թ. ստեղծել էին «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը՝ նպատակ ունենալով Օսմանյան կայսրությունը կապիտալիստական սահմանադրական պետության:
բ. Փարիզի խորհրդաժողովում հայերի շահերը ներկայացնում էին Պողոս Նուբարի գլխավորած ՀՀ և արևմտահայերին և գաղթաշխարհին ներկայացնող Ազգային պատվիրակությունը, որը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը:
գ. 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ը ընդունել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու կոնվենցիան», որը ցեղասպանության սահմանման իրավական հիմքն է:
դ. Մեծ եղեռնի իրագործման առաջին փուլում թիրախ էր դարձել Օսմանյան կայսրության բանակում ծառայող հայ զինվորականությունը:
ե. Երկրորդ համաշխարհային պատերազմի հենց սկզբում կազմավորվել էին հայկական հինգ դիվիզիաներ, որոնք մեծ ներդրում ունեցան հաղթանակի գործում:
զ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Հայաստանում ևս ռազմական գործողություններ տեղի ունեցան, ուստի Խորհրդային Հայաստանը ևս իր լուրջ ներդրումն ունեցավ հիտլերյան Գերմանիայի դեմ պայքարում:
է. Տաթևի վանքում 1921թ. ապրիլի 27-ին հրավիրված համազանգեզուրյան II համագումարը որոշում է Ինքնավար Սյունիքը հռչակել Հայաստանի Հանրապետություն, իսկ վարչապետ է դառնում Գ. Նժդեհը:

14. Ընտրե՛ք այն տարբերակները, որոնցում պատճառահետևանքային կապը ճիշտ է ներկայացված *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Դվինի առաջին (506 թ.) և երկրորդ (554թ.) ժողովների ժամանակ Հայոց եկեղեցին, մերժելով քաղկեդոնականությունը և նեստորականությունը, տարանջատվեց թե՛ մեկից, թե՛ մյուսից՝ ձեռք բերելով իր անկախությունը:
բ. Ալփ Արսլանի արշավանքների հետևանքով թուլացան Պարսկաստանի և Բյուզանդիայի արևելյան պաշտպանական գծերը, հեշտացավ Հայաստանի ու Փոքր Ասիայի նվաճումը:
գ. 924 թ. հայկական զորքերը ջախջախիչ հաղթանակ տարան արաբների նկատմամբ, որից հետո Հայաստանը հասավ Արաբական խալիֆայության գերիշխանության լիակատար թոթափմանը:

դ. 1913 թ. սկսված Բալկանյան պատերազմները Օսմանյան կայսրությանը ներքաշում են քաղաքական ճգնաժամի մեջ, կայսրության վրա տերությունների գործադրած ճնշումն ուժգնանում է և միառժամանակ դուրս է մղվում հայկական հարցը:

ե. 1919 թ. հուլիսի 5-ին թուրքական դատարանը մահապատիժ սահմանեց հայերի կոտորածների հիմնական կազմակերպիչների՝ Թալեաթի, Էնվերի, Սայիդ Հալիմի և Բեհաէդդին Շաքիրի համար :

զ. 1920 թ. օգոստոսի 10-ին ԱՄՆ նախագահ Վ. Ուիլսոնը ստորագրում է հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ իր իրավարար վճիռը, որով Հայաստանին էին անցնում Վանի, Բիթլիսի, Էրզրումի, և Տրապիզոնի նահանգների մեծ մասը:

է. ՀՍԽՀ-ում նէպ-ի գործադրումը նպաստում է տնտեսության վերականգնմանը և 1928 թ. այն հասնում է 1913 թ. մակարդակին:

15. Նշե՛ք այն տարբերակները, որոնցում տերմինը ճիշտ է բացատրված *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Բաներիտ դպրոց – արդյունաբերական վայրում երիտասարդ բանվորների համար հետճաշյա հատուկ դպրոց:

բ. Մոդեռնիզմ - 20-րդ դարի արվեստի ուղղություն, որը հենվում է դասական ավանդույթների վրա:

գ. Նացիոնալ–սոցիալիզմ - Հասարակության, պետության մեջ մեկ մարդու դերի գերագնահատումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի վրա ուռճացված ազդեցություն վերագրելը:

դ. Մոնումենտալ քանդակ - չափերով փոքր քանդակ, որը մշակվում է բոլոր կողմերից:

ե. Ռեպարացիա - Պատերազմում պարտված երկրի կողմից հաղթող երկրին/երկրներին կատարվող ֆինանսական և նյութական փոխհատուցումներ:

զ. Գաղութ -Երկիր կամ տարածաշրջան, որը որևէ տերության գերիշխանության ներքո է, զրկված է ինքնուրույն զարգացման հնարավորությունից և ենթարկվում է տնտեսական շահագործման:

է. Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ) - Ազգայնամոլական ծայրահեղական գաղափարախոսություն, որն առաջացել է Իտալիայում՝ ի հակադրություն ազատականության և համայնավարության:

16. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հերթականությամբ *(1 միավոր)*:

ա. Կ. Պոլսում Բաբ Ալիի ցույց

բ. Թալեաթի սպանությունը Բեռլինում

գ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքում

դ. Հայերեն առաջին տպագիր գրքի հրատարակում

ե. Բաթումի պայմանագրի կնքում

զ. Հոկտեմբերյան հեղափոխություն

է. Վերսալյան հաշտության պայմանագրի կնքում

Վերլուծական հարցեր

17. Համապատասխանեցրե՛ք պայմանագրերը/համաձայնագրերը բովանդակության հետ: *(Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*

Պայմանագիր/համաձայնագիր	Բովանդակություն
1. «Սրտագին և անկեղծ բարեկամության մասին» պայմանագրի նախագիծ	**ա.** Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի վիճելի տարածքները ժամանակավորապես պետք է հսկեին բոլշևիկյան ուժերը
2. 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ՀՀ և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված համաձայնագիր	**բ.** Բոլշևիկները ճանաչում են թուրքական ազգային ուխտը, համաձայնվում են դրամական և ռազմական աջակցություն տրամադրել քեմալականներին :
3. Բաթումի պայմանագիր	**գ.** Նախիջևանը փոխանցվում է Ադրբեջանի խնամակալությանը:
4. 1920թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարության և Բ.Լեգրանի միջև կնքված համաձայնագիր	**դ.** Հայաստանը հայտարարվում է սոցիալիստական անկախ հանրապետություն
5. Մոսկվայի պայմանագիր	**ե.** Արևմտյան Հայաստանի, Կարսի մարզի, Երևանի և Թիֆլիսի նահանգների զգալի տարածքներ անցնում են Թուրքիային

1	2	3	4	5

18. Լրացնե՛լ բացթողնված հատվածը *(յուրաքանչյուրը 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր):*

1991 թ. դեկտեմբերի 8-ին (1) ---------- (ո՞ր քաղաքի) մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում Ռուսաստանի, (2) ---------- (ո՞ր երկրի) և (3) ---------- (ո՞ր երկրի) նախագահները համաձայնագիր ստորագրեցին ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու և (4) ---------- (ի՞նչ) կազմակերպություն ստեղծելու մասին: Դեկտեմբերի 25-ին ԽՍՀՄ հանրապետությունները (5) ---------- (ո՞րտեղ) ստորագրեցին նոր կազմակերպության ստեղծման մասին հռչակագիր:

19. Նշե՛ք Երկրորդ համաշխարհային պատերազմի 2-ական պատճառ և հետևանք *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Պատճառ	Բացասական/Հետևանք
1.	1.
2.	2.

20. Ներկայացրե՛ք նշված կառավարիչների արտաքին քաղաքականության 2 օրինակ *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Մլեհ (1170-1175)	Լևոն I Մեծագործ (1198-1219)
1.	1.
2.	2.

21. Ներկայացրե՛ք 2 գործողություն, որ տեղի է ունեցել նշված երկրներում 20-րդ դարի 1-ին կեսին *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Չինաստան	Ճապոնիա
1.	1.
2.	2.

22. Ճանաչի՛ր նկարը և ներկայացրո՛ւ իրադարձությունը: *(2,5 միավոր)*

Հարցեր

(1) Ո՞ր իրադարձությանն է նվիրված լուսանկարը: Ովքե՞ր են լուսանկարի առաջին շարքում (ձախից 4 հոգի):

(2) Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել համաձայնագիրը:

(3) Ի՞նչ փոփոխություն առաջացրեց այն:

---

23. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

Խոսել սկսեցին ---------- և ասացին. «Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը, քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»: Այս խոսքերն ասեցին և իրենք ամենից առաջ շտապ դուրս եկան պարսպի գաղտնի դռնով, և երեք հարյուր զինվածները հետևեցին նրանց:

Երեք հարյուր զինյալներ նախ հարձակվեցին աջակողմյան գնդի վրա՝ աջ ու ձախ կոտորելով: [Թուրքական բանակում] բոլորը զարհուրած և սասանած ասում էին մեկը մյուսին՝ ով կարող է կյանքը փրկել թող փախչի:

1. Ո՞ր ճակատամարտ-պաշտպանության ընթացքն է նկարագրում մեջբերված խոսքերը: Ե՞րբ է այն տեղի ունեցել *(1 միավոր)*:

---

2. Ո՞վ էր այդ ժամանակ տվյալ ազատագրական պայքարի ղեկավարը: Ովքե՞ր էին կոչի հեղինակները *(1 միավոր)*:

---

3. Ի՞նչ ձեռքբերումներ ունեցանք այդ ազատագրական պայքարի շնորհիվ (գրեք 2-ը) *(1 միավոր)*.

(1) ----------

(2) ----------

24. Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք հարցերին.

«Ռուսաստանի դեմ պատերազմը գերմանական ժողովրդի գոյության համար պայքարի կարևորագույն փուլերից է: Սա գերմանների հին կռիվն է ընդդեմ սլավոնականության, եվրոպական մշակույթի պաշտպանությունն է ընդդեմ մոսկովյան–ասիական արշավանքի, պաշտպանություն հրեական բոլշևիզմից: Այս պատերազմի նպատակն է այսօրվա Ռուսաստանի ջախջախումը, ահա թե ինչու այն պետք է մղվի չտեսնված դաժանությամբ»:

1. Ո՞ր պլանի հավելվածից է մեջբերված հատվածը, ո՞վ է հաստատել այդ պլանը *(1 միավոր)*:

---

2. Ու՞մ դեմ էր պլանն ուղղված: Ե՞րբ սկսվեց դրա գործադրումը *(1 միավոր)*:

---

3. Նշե՛ք մեկ միջանկյալ հաջողություն և մեկ ձախողում, որ եղան այդ պլանի գործադրման արդյունքում *(1 միավոր)*:

---

25. Աշխատանք քարտեզի հետ

1. Ո՞ր պայմանագրով է հաստատվել ընդգծված սահմանը Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի միջև *(1 միավոր)*:

---

2. Ե՞րբ և ովքե՞ր են ստորագրել պայմանագիրը *(1 միավոր)*:

---

3. Ո՞ր գետերով էր անցնելու Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը *(1 միավոր)*:

(1) ---------- (2) ----------

Պատմության օլիմպիադայի

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան

27.03.2026 թ.